

18928

Եւգենի Երի

891.99  
Կ-31

Թիֆլիս  
1889



891, 99

4

31

42

# Ե Ն Ի Չ Ե Ր Ի

(ԹԻԻՐԳԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)



ԳՐԵՑ

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ

Հրատ.

Յ. Ի Ի Ս Ո Ւ Ֆ Ե Ա Ն

2003

Արտատպած «Մշակ» լրագրից

Գինն է հինգ կոպեկ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մոմ. Վարդանեանց

Типография М. Вартанянца Троиц. пер. д. № 11.

1889

9254  
1001



28.08.2012

59.966

Дозволено Цензурою. Тифлисъ, 23 Сентября 1889 г.

## Ե Ն Ի Չ Ե Ր Ի

(Թ Ի Ի Բ Ա Հ Ա Յ Ե Ր Ի Կ Ե Ա Ն Գ Ի Ց)

Ա.

Օսմանեան պատմութիւնը փոքր ինչ ուսումնասիրողին անգամ, յայտնի է Սուլթան-Մահմուդի այն ահարկու զօրքի գունդը, որը կոչվում էր **Ե Ն Ի չ Ե Ր Ի Ն Ե Ր Ի գ ու ն դ**։

Այնչափ արհաւիրք ձգեց իր ժամանակին այս գունդը, նրա իւրաքանչիւր զինւորը այնպիսի սոսկալի բարբարոսութիւններ արաւ, ժողովուրդը նրա ձեռքից այնչափ տաժանելի չարչարանքներ կրեց, որ մինչեւ այսօր էլ, երբ կամենում են նկարագրել մի արիւնհարբու, անօրէն, բարբարոս, կատաղի հրէշ՝ ասում են «**Ննիչերի**»։

Ամենքին յայտնի կը լինի նաեւ նրանց կոտորածը, որը տեղի ունեցաւ Կ. Պօլսի Աթմէյզան կոչվող հրապարակում, ուր եւ այժմ գտնվում է **Ե Ն Ի չ Ե Ր Ի Ն Ե Ր Ի մ ի լ զ է ն**։ Այդ միւղէում կարելի է տեսնել նրանց



մամեղէն արձանները իրանց բնական հագուստներով, գէշքերով, իրանց վայրենի եւ սոսկում ազդող դէմքերով՝ շրջապատած իրանց ներգլխէ ծխող աղային:

Երբ մարդ մտնում է այդ սրահը, երբ մանեւում պէս, դռան դէմ ու դէմը տեսնում է ե ն ի չ ե ր ա Վ ա ս ի ի խոփու դէմքը եւ կարծես թէ կատաղութիւնից գողգողացող շրթունքները, որոնցից դուրս եկած բառերը՝ թափել են գետի չափ անմեղ արիւն, երբ տեսնում է նրան, նստած հպարտութեամբ օթոցի վրա, մէջքը տառած մետաքսեայ բարձերին, մի ձեռքին ներգլխէի փողը, միւս ձեռքը մէջքի լայն գօտիում խրած դաշոյնի կոթին, երբ տեսնում է նրան շրջապատող այդ կատաղի դէմքերով ենիչերինները, կարծես լսում է աղայի հրամանը «վ ու ր ու ն...» (զարկէք) եւ ենիչերինների ականջ խլացնող աղաղակը.... սոսկում է եւ վախենում, կարծելով, թէ ահա նրանցից մէկը զուարճութեան համար իր դաշոյնի սուր լինելը կը փորձէ իր վրա....

Այդպէս էին ենիչերինները, ժողովուրդը նրանց վրա, նրանց բարբարոսական կեանքից բազմաթիւ մանր եւ սոսկալի պատմութիւններ է պատմում եւ պատմութիւնը լաւ նկարագրում է, թէ նրանք ինչպէս օրը ցերեկով եւ Կ. Պօլսի փողոցների մէջ կողոպտում, անպատուում ու սպանում էին:

Դաւառների մէջ անգամ շատ տաճիկներ օրինակ առնելով ենիչերիններից, որոնց երբէք չէին տեսել, մի մի լայն գօտի էին կապում մէջքից, մի քանի գէշք էին առնում, գլխին փաթաթում էին ծուկներից ենիչերական փաթոթը, ձեռքին մի գաւազան՝ գիշերները դուրս էին

գալիս փողոցը, ահագին աղաղակներ արձակելով՝ դռներ էին փշրում, կողոպտում էին, առեւանգում, սպանում եւ անպատիժ մնում:

Այդպիսիներն էլ կոչվում էին ենիչերի:

Բ.

1860 թւականներում, երբ Կ. Պօլսի ենիչերիններից արգէն մի հատ անգամ չէր մնացել եւ սակայն գաւառական ենիչերինները դեռ եւս շարունակում էին դռներ փշրել եւ կողոպտել համարձակութեամբ տները եւ առեւանգել հոյ աղջիկներին՝ Երզրումի Կարսի դռան կողմերում, այժմեան քաղաքի միջի մեծ ղինւորանոցի փողոցներից մէկում կար մի խոր եւ մեծ տուն:

Այդ տունը սրտականում էր Երզրումի նշանաւոր հարուստ Գրիգոր աղային, որը մի շաբաթ առաջ մեռնելով՝ թողել էր իր բոլոր ունեցածը իրան երկու որդոյ՝ Սեդրակին եւ Խաչատուրին:

Սեդրակը եւ Խաչատուրը կամ աւելի ճիշդ է ասելը Խաչատուրը եւ Սեդրակը երկուսն էլ ամուսնացած էին, միայն թէ Խաչատուրը, որը մեծն էր, արգէն 5 տարի էր, որ ամուսնացել էր եւ մի սիրուն որդի էլ ունէր, իսկ Սեդրակի ամուսնութիւնը դեռ եւս երեք ամիս էր եւ նա ունէր կին՝ Երզրումի գեղեցիկուհիներից մէկը:

Տան մէջ այնչափ խաղաղ էին ապրում հարսները իրանց սկեսուրի հետ եւ այդ սկեսուրը իր որդիներով այնչափ ազբատասէր, բարեսիրտ հարուստներ էին, որ



ամբողջ թաղեցիք սիրում եւ յարգում էին նրանց, բոլոր ծխատէրքահանները նախանձում էին տէր-Մարտիրոսին, որը նրանց ծխատէրքահանն էր.... Բոլոր աղքատները օրհնում էին նրանց, որոնց տունը երբէք մի պարէն չէր մտնում, որից իսկոյն բաժին չունենային թաղի եւ մինչեւ իսկ հեռու կողմերի հայցող աղքատ ընտանիքները: Տան տիրուհին, Խաչատուրը եւ նոյն իսկ Սեդրակը՝ ամեն այն ժամանակվայ հայի պէս, շատ բարեպաշտ մարդիկ էին, ամեն օր գործի գնալուց առաջ, երկու որդիք իրանց կանանց եւ մօր հետ եկեղեցի էին գնում, աղօթում էին ջերմեռանդութեամբ, առատութեամբ նւէրներ էին տալիս եկեղեցուն եւ զատակալան լուսագնի ժողովելու ժամանակ, շատ լուսագին տուղների մէջ էին գտնվում նաեւ Գրիգոր աղայի որդոց անունները, որոնք կարգացվում էին եկեղեցու մէջ հաջի խալիֆայի կամ Ղազարոս տիրացուի բարձր ձայներով:

Կանայք եկեղեցուց ետ դառնալուն պէս զբաղվում էին տան գործերով եւ երբ երեկոյեան տղամարդիկ տուն էին գալիս, նրանք ժողովվում էին միասին մի սեղանի շուրջը, զուարթ խօսակցութիւններով ընթրում էին, յետոյ փոքր ինչ միմեանց հետ կատակներ էին անում, փոքրիկ Գրիգորի հետ (որը իր պապի անունն էր կրում) փոքր ինչ էլ խաղում, ապա միասին ոտքի կանգնած բարձրաձայն աղօթում էին եւ իւրաքանչիւր ոք իր սենեակին էր գնում քնելու:

Նրանց կեանքը միշտ այսպէս էր, եւ գեռ եւս ոչ մի դժբաղդութիւն չէր եկել կոտրելու նրանց երջանիկ կեանքը եւ նրանց հարստութիւնը օրից օր աւելանում էր

Մի երեկոյ, երբ տղամարդիկ ներս էին մտել և երբ ճրագները վառվել էին արդէն, յանկարծ մի խուլ աղաղակ լսվեց փողոցի մէջ:

Սեդրակը իսկոյն կամեցաւ դէպի փողոցը վազել, տեսնելու համար թէ այդ ինչ աղաղակ էր, սակայն Խաչատուրը

— Սեդրակ, ասեց— փոխանակ փողոցը ելնելու, շուտով ծառայի հետ փողոցի դռան մօտ գնացէք եւ նիգերը ամրացրէք....

— Հա, ասեց Սեդրակը գունաթափվելով— Ենիշերիի աղաղակ էր....

— Այո, դիտեց մայրը— այդ անիծածները Երզրումը քանդեցին, Սատուած էլ թող քաղաքը պաշտպանելու պարտք ունեցողներին քանդէ....

Սեդրակը ծառայի հետ գնացին եւ փողոցի դռան նիգերը ամրացրին: Ընթրիքը շուտով պատրաստվեցաւ եւ ընտանիքի անդամները նստեցին ընթրելու, երբ յանկարծ նորից լսվեց նոյն աղաղակը եւ այս անգամ աւելի մօտից.... դրան հետեւեց մի ուրիշ աւելի մեծ աղաղակ եւ յանկարծ փողոցի դուռը մի բուռն հարուածից այնպէս դղրեց, որ քիչ մնաց փշրվէր:

Բոլորը գունաթափված ոտքի թռան:

— Մեր դռուն էր, հարցրեց կախաղելով Խաչատուրը:

Մայրը ձեռքով պատին կռթնեց եւ գլխով դրական պատասխան տաւ:

Հարուածը կրկնվեց եւ այս անգամ լսվեց մի խուլոտ ձայն, որը գոչում էր թիւրքերէն.

— Բացէք, թէ չէ դուռը կը փշրեմ.... բացէք,



մինաս չը պիտի տամ:— մի կտոր հաց պիտի ուտեմ եւ հեռանամ:

— Ինչպէս գրացիներից ձայն հանող չը կայ, մումուաց Սեդրակը բարկութիւնից գունաթափվելով:

Խաչատուրը վախեցած նրան նայեց:

— Որդիք, հազիւ կարողացաւ խօսել մայրը արտասուախառն ձայնով, — անիրաւ գուռը կը փշրի եւ այն ժամանակ վայ մեղ... գնացէք բացէք, գուցէ իր ասածի նման միայն մի կտոր հացով բաւականանայ...

Սեդրակը կատաղութեամբ բռնուցնքերը սեղմած՝ չորս կողմն էր նայում:

— Անիծեալ կեանք, — մումուաց նա, — մի հատ զէնք չը կարողանայ ունենալ մարդ իրան պաշտպանելու համար:

Ընտանիքի մէջ ամենքը գիտէին Սեդրակի դիւրագորգութիւնը, ուստի աւելի դրա համար էր, որ վախենում էին գուռը բանալու, եթէ յանկարծ յանդուգն երիտասարդը մի անխոհեմութիւն անէր, ենիչէրին իսկոյն պիտի կատաղէր, կռի պիտի բռնուէին եւ այն ժամանակ միշտ մինաս կարող էր առաջանալ, կամ ենիչէրին կոտորածներ անելով կը հեռանար եւ կամ Սեդրակը նրան կը ուղարկէր... ահա միայն այդ ժամանակ կառավարութիւնը մէջ կը մտնէր եւ Սեդրակը յաւիտեան կը կորսվէր իբրեւ մարդասպան... Դժբեր ճակատ ունէր մի գեաւուր ձեռք բարձրացնել մի միւսիւմանի վրա...

Գ.

X

ենիչէրին, որը մի աւագակային վայրենի դէմքով տաճիկ էր եւ յայտնի չէ, թէ որտեղից ձեռք ձգե խմել էր մի քանի գաւաթ օղի, շարունակ աքացիներ էր տեղում գռան վրա եւ կոկորդը պատռելու չտի բարձր ձայնով անասելի հայհոյանքներ էր տեղում եւ սպառնում էր ամեն ինչ քարուքանդ անելու եւ ամենքին հաւի պէս մորթելու:

Նա զինաւորված էր պաղ զէնքերով, այսինքն ունէր միայն մի երկար սուր կողքից կախած եւ մի կեռ դաշոյն մէջքի լայն գօտիի մէջ խրած, իսկ ձեռքումը կրում էր մի ահագին գլխով կարճ ցուպ, որով նա ամենայն ուժով խփում էր դռան:

Վերջապէս Խաչատուրը դողդոջուն քայլերով մօտեցաւ գռան եւ գուռը բաց արաւ:

— Ներեցէք, աղա, իսկոյն ասեց նա, — քնել էինք եւ չէինք լսում:

— Հը՛մ, փոքր ինչ հանդարտվեց ենիչէրին, — քնել էիք, շներ, միթէ ես այնպէս ցած ձայն ունեմ, որ բոլոր թաղեցիներին, եթէ սատկած իսկ լինեն, ես իմ ձայնովս չը կարողանամ նրանց վեր թռցնել:

— Ի՞նչ ասել է, աղա, վրա տուաւ Խաչատուրը, — այնպէս ձայն ունիս, որ քիչ մնաց մեր տունը քանդվէր քո ձայնից... բայց համեցէք ներս, աղա, տունը քոնն



է, հրամանդ ինչ է, իսկոյն ծառաներդ պատրաստ են կատարելու:

Խաչատուրի այդ ստրկական ձայնը, խօսքերը եւ շարժումները փոքր ինչ մեղմացրին բարբարոսին. նա ներս մտաւ, ուղղակի սենեակը անցաւ եւ նստելով ամենավերին գլուխը, բարձերի վրա, հրամայեց որ իրան հաց բերեն ուտելու:

Իսկոյն Խաչատուրը դուրս եկաւ եւ Սեդրակի հետ ներս բերին արդէն պատրաստ սեղանը. ենիչէրին սկսեց ագահութեամբ ուտել եւ երբ լաւ կշտացել էր, դառնալով Խաչատուրին ասեց.

— Գեաւոր, ձեր կանայքը համով կերակուր են եփել, ուզում եմ տեսնել ձեր կանանցը...

Սեդրակը գունաթափւեց, բայց գսպեց իրան:

— Կանչէ մօրս, ասեց Խաչատուրը նրան:

Խեղճ կինը դողդողալով ներս մտաւ եւ չոքեց ենիչէրի առջեւ:

— Գեաւոր կնիկ, ասեց նրան ենիչէրին հպարտութեամբ, — համով կերակուր ես եփել, բայց դու արդէն շատ պառաւել ես, ի հարկէ, հարսներդ եփած կը լինեն:

— Այո, աղա, իմ հարսներս են եփել:

— Հարսներդ եմ ուզում տեսնել, ասեց ենիչէրին եւ աչքերը փայլեցին անզուսպ կրքերից...

Սեդրակը իրան կտրտում էր բարկութիւնից:

— Սեդրակ, ասեց Խաչատուրը, — ներս բեր հարսներին, թող անօրէնը տեսնէ, հոգ չէ, ինչք կը պակսի հարսներից, թող տեսնէ եւ գուցէ կորսուի երթայ:

— Անկարելի է, մեմուաց Սեդրակը տեղից չը շարժւելով, — ես հարսներին չեմ բերի այս պիղծի առջեւ:

— Մարդու լեզու խօսեցէք, գոռաց ենիչէրին, — շուտով հարսներին բերէք տեսնեմ եւ նա տեղից շարժւեց:

Այն ժամանակ Խաչատուրը ոտքի ելաւ եւ դուրս գնաց. Սեդրակն էլ նրա ետեւից եւ երբ երկուսն էլ մտել էին միւս սենեակը.

— Խաչատուր աղբար, գոչեց Սեդրակը, — եթէ ուզում ես, քո կնոջդ տար, իսկ իմ կնոջ ես չեմ թողնի:

— Յիմար մի՛ լինի, Սեդրակ, ասեց Խաչատուրը, — ենիչէրին իմացաւ որ երկու հարս է. ինչ կը լինի կնոջդ երեսը տեսնելով, բայց գուցէ այլ եւս պատճառ չունենայ եւ կորսուի երթայ...

Հարսները որչափ կարողացան երեսները ծածկեցին, բայց ներս մտնելուն պէս ենիչերին նկատեց Սեդրակի կնոջ գեղեցիկութիւնը եւ այնպէս գրավեցաւ, որ այլ եւս չը կարողանալով համբերել՝ հարցրեց.

— Ո՞ւմն է այս կինը:

— Իմն է, ասաց Սեդրակը:

— Քոնն է, շատ լաւ, ես այս գիշեր այստեղ ձեզ հետ կը մնամ եւ երբ մի միւսիւ լման կայ տան մէջ, տան ամենից գեղեցիկը պիտի ծառայէ նրան զուարճացնելու... դէհ, ելէք, գեաւուրներ, դուրս գնացէք եւ այս սիրուն կինը թող իմ անկողինս փութէ... Սեդրակը եւ նոյն իսկ բոլորը այնպէս քարացած մնացին, որ այլ եւս խօսել չը կարողացան, իսկ հարսը վախեցած սեղմվեցաւ իր սկեսուրի կողքին.

— Զը լսեցիք, գեաւուրներ, գոչեց որոտաձայն



բարբարոսը—շուտ դուրս գնացէք եւ թողէք ինձ մօտ այդ կնոջ:

—Բայց աղա... կմկմաց խաչատուրը:

— Սուս... որոտաց ենիչերին—դ՛ո՛րս, թէ չէ բոլորիդ հաւի պէս կը մորթեմ:

Եւ նա այնպէս կատաղութեամբ սուրը քաշելով օգի մէջ տատանեց, որ նախ տանտիկներ, ապա մեծ հարսը, յետոյ խաչատուրը դուրս փախան սենեակից:

Սեղրակը միայն մնաց, որ վճռականութեամբ մօտեցաւ իր մեռնելու պատրաստ սաստիկ դողացող եւ գետին ընկած կնոջ:

—Հը՛, Ժպտաց ենիչերին նրանց մօտենալով—խնչ է, կի՛նդ է այս, հոգ չէ՛, շատ սիրուն է, եւ դու կարող ես պարծենալ, որ մի կին ունէիր, որը բոլորովին գրաւեց Մէհմէդ չափուշին... ես արդէն ցերեկով տեսել էի կնոջդ եւ երեք օր է քուն չունեմ... այժմ կը թողնես ինձ, էգուց նորէն միշտ թող քոնը լինի... ինչ կայ, որդիս, ինչդ կը պակսի... մի վախենայ. դէհ գնա...

Այս բոլորը նա այնպիսի բնական ձայնով ասաց, որ կարծես թէ սովորական մի բան էր անելիքը:

—Ս.յ... մի ուրիշ բան, տղայ, շարունակեց ենիչերին—եթէ ուզենայ կինդ իր անօրէն հաւատը թողնել եւ ճիշտ կրօնը ընդունել... ես համաձայն եմ նրան իմ հարէմն տանելու եւ քեզ էլ մի լաւ քրտի ոսկի տալու...

Սեղրակը խեղդվում էր, եթէ ոչ ժըյաղթէր, անպատճառ կը խեղդէր նրան, բայց ենիչերիի հսկայ հասակը, լապինդ բազուկները եւ զէնքերը արդէն դողացնում էին

նրան, որը երբէք արիւն չէր տեսել, կռիւ չէր արել եւ զէնք չէր գործածել:

—Բայց այդ մասին առաւօտեան կը խօսենք... շարունակեց ենիչերին... այժմ, ահա քեզ... եւ նա առաջարկեց նրան մի ոսկի—այժմ գնա քնիր... հոգ չէ, այսօր էլ մենակ քնիր...

Սեղրակը անշարժ, կնոջ ձեռքը բռնած՝ իր մարմնով նրան ծածկած՝ ենիչերիին էր նայում...

—Խնչ, գոչեց ենիչերին դէմքը խոփոռելով—տուածս փողը չե՞ս առնում, չե՞ս էլ ուզում դուրս գնալ... չէ որ փորդ կը թափեմ... հայդէ... անհաւատ... կորսուիր դուրս:

Սեղրակը անշարժ մնաց:

Ենիչերին կատաղեց, բռնեց Սեղրակի ոտքերից եւ գլխից, արագութեամբ եւ առանց ուշադրութիւն դարձնելու նրա յուստահատ աղաղակներին, տարաւ նրան դէպի դուռը եւ շարտելով դուրս՝ գոչեց:

—Գնա՛, երիտասարդ ես, խղճում եմ քեզ...

Սեղրակը պահ մի ցաւից ընկած մնաց, ապա ոտքի ելաւ եւ մօնչեց:

—Ո՛չ, աւելի լաւ է մեռնել, քան այսպէս ապրել: Պահ մի մտածեց, ծոծրակը քորեց:

Այդ միջոցին ներսից լսկեցաւ իր կնոջ ձիւր...

Սրինը գլխին զարկաւ, մի ոստիւնով թռաւ դէպի խոհանոցը, յափշտակեց այնտեղից փայտ կտրտելու կացինը, եւ սրացաւ դէպի սենեակը... բայց այնտեղ կանգ առաւ գոնաթափ... դողդողում էր, խեղճը երբէք զէնք չէր բռնել ձեռքը...



Յանկարծ ներսից լսեցաւ մի սուր եւ աղիողորմ ճիչ....

— Նա է... մռնչեց Սեդրակը եւ մինչդեռ խաչատուրը, որը ամեն բան տեսնելով, գունաթափ դէպի նա էր վազում, երիտասարդը ներս սրացաւ...

Ենիշերին գիրկն էր առել սարսափահար կնոջը եւ քակում էր նրա հագուստները.... նրա կեղտոտ շորթունքները հպել էին մարած կնոջ այտերին....

Սեդրակի աչքերը մթնեցին, առիւծի պէս մռնչելով մի ուստին գործեց դէպի ենիշերին եւ բարձրացրած տապարը կատաղութեամբ իջեցրեց նրա գլխին...

Սրահը թնդաց ենիշերի ձայնից, որը բաց թողեց կնոջ, մի քայլ արաւ եւ փութեցաւ գետին....

Սեդրակը կատաղութեամբ ցատկեց դէպի նա, խռպոտ մռնչիւններ արձակելով սկսեց արագութեամբ եւ ամենայն ոյժով տապարով հարուածներ տեղալ ենիշերի գլխին եւ մէջքին:

Սյդ միջոցին սենեակն էին թափվել խաչատուրը, մայրը, հարսը եւ ծառան, որոնք որքան աշխատում էին Սեդրակին ետ քաշել՝ անկարելի էր լինում:

— Սեդրակ, մեր տունն ես քանդում.... գոչում էր խեղճ մայրը....

— Սեդրակ, սպանեցիր.... գոչում էր եղբայրը:

— Սեդրակ, հերիք է.... ասում էր մեծ հարսը....

Իսկ Սեդրակը, աչքերը մեծ մեծ բացած եւ արիւնոտ, մազերը ցից, ձեռքերը եւ դէմքը արիւնով ողողված, կատաղի մռնչիւններ արձակելով, տապարի հա-

րուածներ էր տեղում արդէն ամեն կողմից ջախջախված ենիշերի դիակի վրա եւ մռնչում էր...

— Թողէք... Թողէք զարնեմ....

Վերջապէս բռնեցին նրան եւ երբ կամենում էին տապարը ձեռքից առնել՝ յանկարծ նա տապարը վերջին անգամ ուժգնութեամբ նետեց դիակի վրա, մի անգամ եւս կատաղի եւ արիւնոտ աչքերով նրան նայեց, յետոյ իր չորս կողմը... եւ մի այնպիսի դառն, այնպիսի սոսկալի ծիծաղ արձակեց, որ ամենքը վախեցած թողին նրան եւ ետ քաշվեցան....

Սեդրակը խենթացել էր....

Դ.

Հաղիւ թէ գալիս է աւագ հինգշաբթին եւ ահա քահանաները այլ եւս հանգստութիւն չեն ունենում, որովհետեւ ամեն կողմից նրանց մօտ են թափվում խոստովանողները.... Նրանք պէտք է իսկոյն հազորդութիւն տան մանուկներին, յետոյ մէկ-մէկ խոստովանեցնեն իրանց մօտ եկող մարդկանց եւ որը տաժանելի է նրանց համար, միւս օրն էլ առաւօտեան շուտով պիտի շարունակ երկու օր խոստովանեցնեն կանանց եւ աղջիկներին, որոնք արդէն տեղ են գրաւել եկեղեցու մէջը եւ շուրջը, միմեանց հրմշտկում են, իրանց խոսակցութիւններով ականջ են խլացնում եւ շատ անգամ այնպէս կռիւներ սարքում եկեղեցու մէջ, որ քահանաները թողնելով իրանց խոստովանանքը, ստիպվում են միջամտել, կոկորդ-



պատուելու չափ գոռգոռալ եւ կռիւր աշխատել հանդարտեցնելու:

Եթէ չը լինէին զատկական երեք օրվայ առատ եկամուտները եւ ոչ մի քահանայ յանձն կառնէր այդ տաժանելի աշխատութիւնը, որը տարին երկու անգամ կրկնւում է Երզրումում:

Աւագ հինգշաբթի օրվայ առաւօտը, ժամերգութիւնը վերջացնելուց յետոյ, երբ քահանաները կամենում էին նախ տուն երթալ հաց ուտելու, որ յետոյ եւ սկսեն խոստովանութիւնները.... փիլոնը ցած առնելու ժամանակ, աջակողմեան դասում լսվեց մի կռւի ձայն:

Կռում էին երկու քահանաներ եւ իրանց կռիւր հետզհետէ հրաւրեց այդտեղ բոլոր միւս քահանաներին եւ կռիւր ընդհանուր դարձաւ:

— Ի հարկէ, գոչում էր տէր-Մեսրոբը տէր Պետրոսին—հարուստ ծուխերը բոլորը քոնն են, էլ ցաւդ ինչ է.... ասում ես քիչ ծուխ ունես հը, թէ քաջ ես, արի ծուխներս փոփոխենք, ես իմ ծուխերից երեքը կը տամ, դու քոներիցը մէկը տուր....

— Ինչո՞ւ չէ, ասեց տէր Պետրոսը ժպտելով—հըն ես կամենում:

— Այ, ես քեզ կը տամ Ծատուրենց, Փիլանենց, Տէր-Կարապետենց, դու ինձ տուր Տիարպէրիցենց....

— Ինչպէս չէ, ծիծաղեց բարձրաձայն—ձեռքերդ բաց մէջը գնեմ.... ծուխերիցդ տասը տաս՝ ես Տիարպէրիցենց չեմ տալ...:

— Տեսնո՞ւր.... լաւ ուրեմն Տէր-Աղարենց տուր...

— Ինչե՞ր ես խօսում, գոչեց տէր Պետրոսը—թէ

խենթացել ես, ասա, որ յիմար քահանան Տէր-Աղարենց պէս ծուխ ունենայ եւ ձեռքիցը բաց թողնէ.... այ, եթէ կուզես քո ծուխերիցդ հինգ ծուխ տուր, ես քեզ կը տամ Մարգարանենց....

— Հը, ծիծաղելով մէջ մտաւ այդ միջոցին տէր Մկրտիչը—լսել ես որ նրանց գործերը վատ են գնում նրա համար....

— Այն չէ, բայց սա Հաջի Կարապետենց լսել եմ, որ ծախում ես, քանի՞ի կը տաս, ասեց տէր-Գրիգորը:

— Ծախում է, հա՛, ծախում ես, գոչեցին բոլորը—քանի՞, քանի՞:

— 200 դուրուշ կանխիկ:

— Շատ թանգ է, գոչեց տէր-Մարտիրոսը—150-ի կրտաւս...

— Ես 180 կը տամ, մէջ մտաւ տէր-Անդրէասը....

— Ես 190.... գոչեց տէր-Գրիգորը....

— 200 ես տուի գնաց, ասեց տէր-Մկրտիչը եւ բռնելով տէր-Պետրոսի ձեռքը թօթովեց.

— Փողը՞, հարցրեց վերջինս:

— Հիմա տնից գալուն կը բերեմ....

Այդ միջոցին եկեղեցին մտաւ մի միջահասակ քառասնամեայ մարդ, գունաթափ դէմքով եւ կոր քամակով.... մօտեցաւ սեղանին, աղօթեց մի քանի րոպէ արտասուելով եւ ապա դառնալով քահանաներից տէր-Մարտիրոսին, ասեց դողդոջուն ձայնով.

— Տէր-հայր, կարո՞ղ ես ինձ խոստովանեցնել....

— Ինչո՞ւ չէ, Խաչատուր աղաս, ժպտաց քահանան — բայց պատրաստ ես:



— Այո, միմեջաց Խաչատուր աղան:

— Սաղմոս կարդացե՛լ ես:

— Ամբողջ գիշերը....

— Շատ լաւ.... Հը՞մ, եթէ կուզես.... եւ նա գէւ-  
քը ծռմռեց— ինձ կը ներե՞ս, որ տուն երթամ եւ հաց  
ուտեմ գամ... շուտ կը գամ, դու աղօթիր....

— Շատ լաւ, ասեց մեղմութեամբ Խաչատուր աղան  
եւ գնաց սեղանի առջեւ, չոքեց այնտեղ եւ գլուխը  
ձեռքերի մէջ առաւ:

Տէր Մարտիրոսը շտապով մեկնեցաւ.

— Ինչո՞ւ չը շտապի, ասեց տէր-Պետրոսը ցած  
ձայնով միւսներին— այնպիսի ծուխ է, որ եթէ բոլորին  
ծախէ, սա միայն իրան կապրեցնէ:

Եւ քահանաները ցրվեցին:

Եկեղեցու մէջ մնաց միայն Խաչատուր աղան, որը  
գլուխը միշտ ձեռքերի մէջ առած, անշարժ, գլուխը  
խոնարհեցրած, աղօթում էր եւ նրա թափած արցունքի  
կաթիլները մատների միջից գլորվում էին սեղանի առ-  
ջեւի պաղ քարերի վրա...

Ի՞նչ ունէր խեղճ մարդը, որ աղօթելու եւ ար-  
տասուելու պէտք էր գգում եկել չոքել Աստուծոյ առջեւ  
կատարում էր իր խոստովանութիւնը.... Ամբողջ կէս  
ժամ նա այդ դրութեան մէջ մնաց եւ միայն իր  
արտասուած թափախ երեսը այն ժամանակ բարձրացրեց,  
երբ քահանան հաց ուտելուց վերադառնալով, մօտեցել  
էր նրան եւ ասում էր.

— Ելիր, Խաչատուր աղա, գնանք խոստովանեցնեմ:

Եկեղեցու մի սնի տակ նստեց քահանան, Խաչատուրը

չոքեց նրա առջեւ, կարդաց «մեղան» եւ մի խոր հառա-  
ջանք արձակեց, երբ քահանան ասեց.

— Որդի, գործած մեղքերդ ասա....

Խաչատուրը դողդոջուն ձայնով ասեց մի քանի  
մեղքեր եւ յանկարծ կանգ առաւ:

— Ել չը կայ... հարցրեց քահանան:

— Ո՛չ, ասեց Խաչատուրը հաղիւ լսելի ձայնով:

— Ուրեմն արձակում տամ, եւ նա ձեռները պարզեց...

Յանկարծ Խաչատուրը մի շարժում գործեց, ուզեց  
խօսելու— չը կարողացաւ, ուստի ուժգնութեամբ բռնեց  
քահանայի ձեռքերը:

Քահանան ակամայ մի ճիչ արձակեց. Խաչատուրը  
մեռեալի պէս գունաթափ, դողդողում էր եւ քիչ էր  
մնում ցած ընկնէր.

— Տէր հայր... գոչեց նա վերջապէս մի բուռն ճիգ  
գործելով:

— Հիւանդ ես որդի...

— Ո՛չ, ո՛չ, ընդհատեց Խաչատուրը— դեռ եւս մի  
բան պիտի խոստովանվեմ քեզ, բայց տես, խոստացիր,  
որ ինչպէս վայել է քահանայի, խոստովանանքս քեզ մօտ  
գաղտնի պիտի մնայ մինչեւ յաւիտեան....

— Այդ ի՞նչ խօսք է, որդի, ասեց քահանան— իզուր  
ես այդպիսի խօսքեր ասում. արդէն քահանայի պարտքն  
է ամեն խոստովանանք մինչեւ յաւիտեան գաղտնի պա-  
հել... մեր օրէնքի մէջ սաղ սաղ վառում են այն քահա-  
նային, որը խոստովանանքը դուրս է տալու....

— Աստուած կարգիդ միշտ հաստատ պահի, ասեց  
Խաչատուրը փոքր ինչ միամտելով— այժմ լսիր.... սրանից



տաւ օր առաջ, մի գիշեր մեր տուն մտաւ մի ենիչերի....  
կերաւ, խմեց... բայց դրանով չը բաւականացաւ եւ ու-  
ղեց որ մեր Սեդրակի կինը իրեն յանձնենք...

— Վայ անօրէն, վայ, գոչեց քահանան սոսկում  
յայտնելով:

— Լսիր... սուրը քաշեց, խլեց կինը, Սեդրակին  
սենեակից դուրս շարտեց եւ առաւ կինը իր գիրկը....  
մենք փախանք բոլորս..... բայց Սեդրակը, որը, ինչպէս  
գիտես, փոքր ինչ դիւրագրգիռ է, լսելով իր կնոջ  
ճիչերը... խլեց տապարը եւ ներս փաղեց.... Ա՛խ, տէր  
հայր, մինչեւ որ ես հասայ.... Սեդրակը արդէն ջարդել  
էր ենիչերի գլուխը....

Եւ լռելով գլուխը կուրծքին կախեց ու սկսեց արտա-  
սվել:

Քահանան պահ մը քարացած մնաց այդ սոսկալի  
խոստովանութեան վրա, բայց իսկոյն ամփոփեց իրան  
եւ ասեց....

— Վատ բան.... ուրեմն Սեդրակը այն օրվանից  
խենթացաւ....

— Ա՛խ, այո՛, տէր հայր, ասեց Խաչատուրը—  
խենթացաւ... կ'ինն էլ այժմ մեռնելու մօտ հիւանդ է....  
Աստուած մեզ պահելէ....

— Իսկ ենիչերի գիակը՞ ինչ արիք, հարցրեց քահա-  
նան:

— Դիակը ... մեր բակի մէջ թաղեցինք....

Տիրեց պահ մի լուռութիւն, որից յետոյ քահանան  
ասեց ծանրութեամբ.

— Թէեւ վատ բան է այդ, Խաչատուր, բայց ե-

զածը եղած է, լաւ արիր որ եկար խոստովանեցար....  
Աստուած գուցէ ձեր տան մեղքը ջնջի... ոչ ոքի չը  
խօսէք, զգոյշ կացէք, ապա թէ ոչ, տնով-տեղով կը  
կորսուիք... Այժմ արձակում տամ քեզ... դու ձեռքերդ  
արիւնի մէջ չես թաթխել, դու այդտեղ անմեղ ես....

Եւ քահանան մտադբաղ տուաւ արձակումը.

Ե.

Տէր Մարտիրոսը խիտ մտադբաղ էր:

Ո՞վ գիտէ ինչեր էր մտածում նա. մինչեւ իսկ նրա  
պաշտօնակիցները նկատեցին, որ նա մի քանի օր էր,  
շարունակ աղօթքները սխալ էր կարդում, մէկը միւսի  
փոխարէն... հեռու էր քաշվում խմբից եւ շատ անգամ  
գնում էր Ղափազից դուրս— դաշտերում թափառելու...

— Խեղճը հիւանդ է... ասում էին պաշտօնակիցները:

Բայց յանկարծ տէր-Մարտիրոսը փոխվեցաւ, նրա  
տխրութիւնը բոլորովին անցաւ, նա այժմ զուարթ էր,  
նրա դէմքը այժմ փայլում էր, նա սկսեց նորից խօսել,  
կատակներ անել, մինչեւ իսկ խմել:

Սակայն իր այս զուարթութեան մէջ իսկ նա տա-  
րօրինակ էր: Որովհետեւ զուարթութիւնից թեթեւացել  
էր, դէմքը փայլում էր այնպէս ուրախ, որ կարծես մի  
մեծ գանձ էր գտել, կատակներ անում էր սովորականից  
աւելի, ծիծաղում էր իր սովորութեան հակառակ աւելի  
բարձրաձայն եւ տեւողական ու խմում էր աւելի եւ



աւելի շատ, անպէս որ մի օր սրբազան առաջնորդը յանդիմանեց նրան ասելով.

— Տէր-Մարտիրոս, թեթեւացել ես, ի՞նչ ես գտել որ այդպէս զուարթացել ես... եթէ գանձ ես գտել, ի՞նչու ես մոռանում քո առաջնորդին:

Սակայն տէր Մարտիրոսը եւ ոչ իսկ ուշադրութիւն էր դարձնում նրան: Իր պաշտօնակիցները մի օր սոսկացին, տեսնելով որ տէր-Մարտիրոսը այլ եւս հաւատում է իրանց եւ հասցոյթը կ'իսելու ժամանակ, փողը առանց համրելու գրպանն է լցնում:

— Խենթացել է... բոլորովին խենթացել... ասում էին նրանք: Մի օր տէր-Մարտիրոսը յանկարծ Քէօլբաշին գնաց եւ վարձեց քսան հատ մշակներ եւ որմնադիրներ. տարաւ տուն, հրամայեց իր կնոջ եւ որդոցը, որ քաշվեն դրացիի առնը եւ տունը սկսեց քանդել տալ...- յետոյ կանչեց մի ճարտարապետ-որմնադիր եւ սկսեց նրա հետ մի պլան կազմել մի երկյարկանի փառաւոր տուն շինել տալու համար....

Երբ պաշտօնակիցները այդ լսեցին, ապա՞ծ նախ իրարու նայեցին եւ ապա տէր-Պետրոսը ասեց.

— Տեսնում էք անիծեալին... կամ գանձ է գտել եւ կամ փողերը պահում էր եւ այժմ երեւան է հանում...-

Որչափ կուգէին թող զանազան կարծիքներ տանէին, իրողութիւնը այն է, որ տէր-Մարտիրոսը իսկապէս մի մեծ գանձ էր գտել... իսկ թէ որտեղից, այդ կը պարզի հետեւեալ նամակը, որ նա երեկոյեան քաշվելով իր սենեակը, գրեց....

Ս.Հա այդ հետաքրքիր նամակը.

«Սիրելի Խաչատուր աղաս....

«Տուն եմ շինում եւ առ այժմ 100 ոսկու պէտք ունեմ, յոյս ունեմ, որ կը վճարես այդ չնչին գումարը. միամիտ կաց. խոստովանանքդ միշտ գաղտնի պիտի պահեմ. փողը պիտի ուղարկես կարծեմ»: Խոստովանահայրդ Մարտիրոս քահանայ:

Երբ այս նամակը խանութում ստացաւ Խաչատուրը, նախ ապշած բերողին նայեց, որ քահանայի որդին էր, յետոյ մի անգամ եւս կարդաց, գունաթափվեց. պահ մի մտածեց, ապա մի խոր անքաշեց եւ քահանայի որդու տուրակի մէջ լցրեց լուծեամբ 100 ոսկին....

Եթէ Խաչատուրը այն սոսկալի գէպքերից յետոյ գունաթափվել էր բոլորովին, միւս առաւօտեան, երբ հայելիի մէջ նայեց, տեսաւ, որ մազերի կէսը սպիտակել են.... մի խոր անքաշեց, առաւ վերարկուն եւ տանից դուրս գնաց մոմաւալով....

Մինչեւ քահանայի նոր տան շէնքը վերջանալը, տէր-Մարտիրոսը իր նոր գանձարանից շուրջ 500 ոսկի էր առել....

— Հը՛մ, ծիծաղեց նա—չնչին գումար.... կաթիլ ծովից.... այժմ սկսեմք բռն գործին....

Եւ նա այս անգամ միանգամից 1,000 ոսկու մի նամակ գրեց իր գանձատան.... Փանձատունը այս անգամ ապստամբեց, բայց խորամանկ տէր Մարտիրոսը առաւօտեան շուկայից արդէն թուղթ եւ թանաք գնել էր առատօրէն, ուստի ժպտալով նստեց եւ գրեց.

«Սիրելի Խաչատուր աղաս.

«Մինչեւ չորս օր ժամանակ եմ տալիս քեզ, որ



1,000 ոսկին ուղարկես. խոստովանքիցդ ես վախենում, մի վախենար, ոչ ոքի չեմ ասի, այդ արդէն քեզ խոստացել եմ, բայց 1,000 ոսկին էլ չը պիտի մերժես գաղտնիքդ պահողից: Հա, լաւ միտս ընկաւ. Յերթեւում մի նոր հողի մօտ մի մեծ եւ սիրուն արտ ունես լսեցի, այն արտն էլ, իբր նուէր, չե՞ս տայ քեզ շատ սիրող խոստովանահօրդ....»:

Չորս օրից յետոյ հազար ոսկին տէր-Մարտիրոսին եկաւ արտի թղթերի հետ եւ ահա իսկոյն շուկայում տարածվեց, որ Գրիգոր աղայի որդին, Խաչատուր աղան ծախել է իր բոլոր հողերը եւ այժմ գործերը շատ վատ դրութեան մէջ են.... Ի հարկէ վատ դրութեան մէջ կը լինէին. հէշտ է մի վաճառականին եւ այն էլ Երզրումի պէս մի փոքրիկ քաղաքի վաճառականին, մի քանի ամսվայ մէջ կորցնել 1,500 լիւրա....

Եթէ նամակը կրկնվէր, Խաչատուրը այս անգամ ստիպված էր տունը եւ խանութը ծախել....

Մի շաբաթից յետոյ, մի օր, երբ Խաչատուրը եկեղեցու սեղանի առջեւ աղօթում էր լալագին, մօտեցաւ նրան տէր-Մարտիրոսը եւ կոպտութեամբ ասեց նրա երեսն ի վեր.

— Խաչատուր, պարտատէրերս ինձ շատ են նեղացնում, չե՞ս կարող մի հազար ոսկի էլ ճարել ինձ համար.... եւ մօտենալով ականջին՝ մի վախենա, ասեց, խոստովանանքդ միշտ գաղտնի է մնացել....

2.

Այս դէպքերից մի ամիս յետոյ, մի շաբաթ օր, երբ սրբազան առաջնորդը եկեղեցուց վերադարձել եւ օթոցի մէջ ընկղմած սուրճ էր խմում, ծառան ներս մտնելով, յայտնեց որ մի ծերունի թախանձագին խնդրում է տեսնել սրբազանին:

— Ի՞նչպէս է հաջնված, հարցրեց սրբազանը:

— Գրիգոր աղայի տղան է, Խաչատուր աղան:

— Հա, ժպտաց սրբազանը — թող ներս գայ:

Մի քանի րօպէից յետոյ սենեակն է մտնում մի շատ խեղճ հաջնված կորաքամակ, խորշմուտ ճակատով, գունաթափ եւ բոլորովին սպիտակ մազերով ծերունի...

Որչափ փոփոխութիւն.... առոյգ, սեւ մազերով եւ զուարթ դէմքով Խաչատուրը այժմ եղել էր մի խղճալի ծերուկ, յենած փայտի վրա, փայտ, որը նա դրեց մի անկիւնում, արտասուագին մօտեցաւ սրբազանին, չօքեց, համբուրեց նրա աջը եւ գոչեց դողդոջուն ձայնով:

— Սրբազան, եկել եմ քեզ մի հարցմունք անելու, քեզ նեղութիւն չը պիտի տամ, շուտով պիտի երթամ...

— Խօսիր, որդի, ասաց սրբազանը — խօսիր ի՞նչ է ցաւդ:

— Յա, ժպտաց գառնութեամբ ծերունին — ես ցաւ չունեմ այլ եւս, ի՞նչ մնաց ինձ ցաւելու.... ցաւ չունեմ, սրբազան. այլ մի հարցմունք...

— Առա,



— Հարցնում եմ. մեր եկեղեցու մէջ օրէնք կայ, որ քահանան իրան խոստովանածը ասէ ուրիշի. եթէ կայ—ես իմ հաւատս կուրանամ, եթէ չը կայ—նորէն կուրանամ... պատասխանիր, սրբաբազան, ասա ինձ, օրէնք կայ թէ չը կայ... կերթամ կը փորձեմ պաշտել մահմետականների Ստուածը... Կերթամ մահմետական կը լինեմ, մի փաթոթ կը փաթաթեմ գլխիս, ենիչերիի հագուստ կը հագնեմ, դռնէ դուռ կընկնեմ, կը զարնեմ, կը փշրեմ, կառեւանդեմ, կը սպանեմ եւ ապա կերթամ կազօթեմ նրանց Ստուածուն... Յարգել մեր եկեղեցական օրէնքները եւ ծէսերը... ո՞վ է այդ յանդուգնը... Սրբազան... ասա ինձ, մեր եկեղեցու մէջ կայ օրէնք որ քահանան իրան խոստովանածը յայտնէ. եթէ կայ—այս բոսնիս կերթամ մահմետական կը լինեմ. եթէ չը կայ—նորէն կերթամ...

Նա լռեց, արտասուները առատօրէն հոսում էին նրա աչքերից եւ սրբազանը ապշած՝ չը գիտէր ինչ պատասխանել:

— Սյո՛, շարունակեց ծերունին — մենք գանգատուում ենք թիւրք ենիչերիներից, որ նրանք կողոպտում են, անպատուում են, սպանում են... մինչդեռ խեղճ յիմարներս չը գիտենք որ մեր ենիչերիները աւելի սոսկալի են. եթէ ենիչերին պիտի անպատուէր իմ հարսին զոռով, այժմ, մեր ենիչերիի շնորհիւ, հարսս պիտի գնայ իր պատիւը ծախելու իր կամքով... հա՛, հա՛, հա՛... սպրեւու համար, որովհետեւ Գրիգոր ազայի որդիները այլ եւս օրվայ հացի կարօտ են եւ եթէ չեն մուրում, դրա

պատճառը դեռ եւս մեզ մնացող ամսին է... որին ոչ որ կարող է խլել մեզնից...

Սրբազանը շփոթվել էր. չը գիտէր ինչ ասել. շարժվեցաւ տեղից եւ կմկմալով ասեց.

— Որդի՛, ասածներիցդ ոչինչ չեմ հասկանում... պարզ խօսիր, եղածը պատմիր ինձ, ցաւերդ ասա ինձ...

Ծերունին լռեց, պահ մի առաջնորդին նայեց, սրբեց արտասուները, ստացաւ մի յուսահատ լրջութիւն եւ ասեց.

— Ուզում ես իմանա՞լ, սրբազան... շատ լաւ, ուրեմն լսիր.....

Մեր տուն մտաւ մի օր մի թիւրք ենիչերի, կերաւ, խմեց, յետոյ եղբօրս կնոջը ուզեց... եղբայրս էլ չը դիմացաւ իր կնոջ ճիչերին, զարկաւ, սպանեց ենիչերիին եւ ինքն էլ խենթացաւ... այս է բոլորը... սրբազան, մի մարդ սպանւեց մեր տան մէջ, մի խեղճ, այո մի շատ խեղճ ենիչերի... այս է թիւրք ենիչերիի պատմութիւնը... Այժմ լսիր, ես քեզ կը պատմեմ մի ուրիշ աւելի սոսկալի, աւելի կատաղի արարածի մասին, որ մի հայ է, սրբազան, մի քահանայ է, սրբազան, մի քահանայ, լսո՞ւմ ես, մի քահանայ:

Եւ նա այնպէս որոտում էր կատաղութեամբ, որ նրա աչքերը կարծես պատրաստ էին դուրս թռչելու ականակապիճներից. նրա քամակը ուղղվել էր, նրա գունաթափ դէմքը կապուել եւ նրա շրթունքները ամառային տերեւի պէս դողդողում էին...

Սրբազանը վախենում էր, բայց զսպեց իրան:

— Սյո՛, մի քահանայ, մունչեց ծերունին — որը լսեց



իմ խոստովանութիւնը, սրբազան, եւ օգուտ քաղելով  
դրանից, կողոպտեց ինձ ոտից մինչեւ գլուխ... Խաչատուր  
աղայից շինեց ինձ մուրացկան Խաչատուր եւ ստիպեց  
իմ հարսներին, իմ մօրը այսօր տան մէջ անօթի  
անցկացնել... Եգուց հարսներս պողնկութեան կերթան  
եւ մայրս գերեզման.... խեղճ ենիչերի, ի՞նչ էիր դու  
տէր-Մարտիրոսի առջեւ.... թող գայիր եւ նրանից սո-  
վորէիր ենիչերութիւն....

Յանկարծ լռեց, ոտքի ելաւ, առաւ իր գաւազանը,  
պահ մի լռութեամբ նրա վրա յենած սրբազանին նա-  
յեց եւ շարունակեց.

— Սրբազան, պատմութիւնս իմացար.... ահա ա-  
սում եմ քեզ, որ վաղը պիտի գամ իմ հարցերիս պա-  
տասխանի համար: Կրկնում եմ, եթէ մեր եկեղեցու մէջ  
օրէնք կայ որ քահանան իրան խոստովանածը ուրիշին  
պատմէ.... ես թողնում եմ այդպիսի հաւատը, եւ  
գնում եմ մի այնպիսի հաւատ ընդունելու, որ չունի  
խոստովանանք, որ նրա միջոցով մի ամբողջ տուն քան-  
դէ.... Իսկ եթէ չը կայ... նորէն գնում եմ ուրիշ  
հաւատ ընդունելու....

Եւ գլուխ տալով դէպի դուռը գնաց. բայց այնտեղ  
յանկարծ կանգ առաւ, դարձաւ, նայեց սրբազանին եւ  
առաց դառն ժպիտով.

— Հա, եթէ ուզում ես իմանալ թէ ի՞նչ եղաւ  
խենթացած եղբայրս, հարցուր տէր-Գրիգորին, որը  
այսօր թաղեց նրան....

Եւ դուրս գնաց, հանդարտ քայլերով իջաւ սանդուղտ-  
ներից ու մտաւ գերեզմանանոց...

Երբ անցնում էր բազից, ամեն ոք լսեց թէ ինչպէս  
այդ ծերունին գոռաց կատաղի ձայնով.

— Թէ կայ—կուրանամ, թէ չը կայ—նորէն կուրա-  
նամ:

Եւ մի դառն բրբիջ արձակելով մտաւ գերեզ-  
մանատուն....

Այն միջոցին երբ ծերունին դուրս էր գնում,  
սրբազանի մօտ մտաւ տէր-Մարտիրոսը մի քսակ ձեռքը  
բռնած:

— Համարձակ, ասեց նրան ականջին սրբազանի  
ծառան—համարձակ եղիր եւ տուր ոսկիները, թէ չէ  
բանդ բուրդ է:

— Սրբազանը դեռ եւս գտնվում էր մի տեսակ  
ապշուրեցեան մէջ:

Այդ ապշուրեցից նրան հանեց տէր-Մարտիրոսը,  
որը գողգողալով մօտեցաւ նրան, բռնեց նրա աջը եւ  
համբուրեց:

Սրբազանը սթափեցաւ:

Ո՞ր է, գոչեց եւ ապա տեսնելով տէր-Մարտիրոսին,  
դէմքը խոժողելով վեր թռաւ եւ գոչեց:

— Դ՞հա, եւ դեռ համարձակվում ես...

— Ի՞նչ անեմ, սրբազան, ասեց քահանան կեղ-  
ծաւոր ձայնով—ես շատ ժամանակ է եկել եմ, բայց  
ինձ ներս չը թողին, յարեց նա եւ սրբազանի մօտ դրաւ  
տոսպրակը....

— Ի՞նչ է այս, հարցրեց խստութեամբ սրբազանը:

— Զեր խոնարհ որդուց մի 500 ոսկի նուէր իր  
սրբազանին....



Սրբազանը շոշափեց ստպրակը.... նա թոթափեց իրան եւ գէմքը պարզվեց:..

— Իրաւ է, տէր-Մարտիրոս, ասեց նա—իրաւ է որ դու այդ խեղճերի հետ այդպէս ես վարվել...

— Ի՞նչ մեղքս պահեմ, սրբազան, ասեց քահանան յանցաւորի ձայնով—որդինքս հաց էին ուզում:...

— Խոստովանանքը որին ես յայտնել....

— Ե՞ս, սրբազան, քաւ լիցի, ես յարգել եմ մեր սուրբ եկեղեցու օրէնքը, իմ բերնից երբէք խոստովանանքը դուրս չի ելեր.... կայրվէր իմ լեզուն, եթէ այդպէս մի բան անէի....

— Հը՛մ, ծիծաղեց սրբազանը—բաւական խորամանկ ես եղել, տէր-Մարտիրոս, բայց գիտես, ծերունին վաղը պիտի գայ պատասխան ստանալու... աղմուկ պիտի հանէ....

— Դրա ճարը ես մտածել եմ, սրբազան. Սարգիսին հրամայէք. որ երբ ծերունին գայ, վռնդէ եւ ներս չը թողնէ, թող ասէ թէ ծերուկը խենթ է եւ կարող է սրբազանին վնասել...,

— Լաւ ասեցիր, դիտեց սրբազանը—դրանով կազատուինք աղմուկից.... եւ դառնալով դէպի դուռը՝ ծառային կանչեց,

Սարգիսը իսկոյն ներս վազեց:

Սրբազանը կրկնեց նրան տէր-Մարտիրոսի խօսքերը:

— Այլ եւս պէտք չը կայ, սրբազան, դիտեց ծառան:

— Ինչո՞ւ, գոչեցին երկուսն էլ:

— Ծերուկը խենթացաւ. նրան գերեզմանատունից, ուր նա կամենում էր եղբօր գերեզմանը քանդել, տուն տարան....

Երկու կրօնաւորները մի խոր եւ ազատ շունչ խռին....

— Աղատվեցանք.... ասեց տէր-Մարտիրոսը:

— Ի՞նչո՞ւ էլ աղատվեց.... մոռնաց սրբազանը....

Է.

Մի օր մի գերեզման փորեցին եւ Գրիգոր աղայի կնոջ՝ Խաչատուրի ու Սեդրակի մօր դագաղը մի քանի մշակներ նրա մէջ դրին....

Ասում են թէ Սեդրակի կինն էր այն նշանաւոր պոռնիկը, որին Հեօլլիս թաղի բնակիչները քիչ մնաց քարկոծէին եւ որը Պօլիս գնաց դրանից յետոյ....

Սրգեօք տեսնող եղե՛լ է նրան Ղալաթիոյ պոռնկատների մէջ.... Իսկ մինչեւ 1868 թւականը դեռ եւս Կ. Պօլսի Ս. Փրկիչ հիւանդանոցի խենթանոցում կարելի էր տեսնել մի սպիտակ հագած ծերուկ խենթի, որը իրան յանձնված աղբի տակառը շալակելով հանդերձ՝ դռում էր միշտ կատաղի ձայնով.

— Թէ կայ—կուրանամ, թէ չը կայ—նորէն կուրանամ....

Խաչատուրն էր, որին մի օր յանկարծ՝ հիւանդանոցը բարձրացրին, վերցնելով պատի տակից, ուր նա ընկել էր. մի քանի օրից յետոյ պատանքով փաթաթեցին,



դրին նաշի մէջ... Զորս խենթեր շալակելով դազաղը  
վազէ վազ դէպի դերեզմանատուն տարան, ուր քահա-  
նան մի քանի աղօթք կարդաց նրա վրա եւ խենթերը  
իրանց խենթական երգերը երգելով, հողով ծածկեցին  
նրան....

**Վ Ե Ր Զ**





18928

2013



